

## X—XVII ԴԴ. ՀԱՅԵՐԵՆԻ ԶԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

### Ս. Վ. ԳՅՈՒՐՈՒԴԱՂՅԱՆ

Հայերենի ուղղագրության հիմքում ընկած է երեք սկզբունք՝ հնչյունային, ստուգաբանական և ավանդական: Հնչյունային ուղղագրության դեպքում գիրը համապատասխանում է հնչյունին, գրում են այնպես ինչպես հնչում են: Ստուգաբանական ուղղագրության դեպքում նկատի է առնվում բառի ծագումն ու կազմությունը: Ավանդական ուղղագրության դեպքում ընդունվում է նախնիներից ժառանգված ուղղագրությունը, բառերը գրվում են այնպես, ինչպես լինել են նախնիները: Դասական հայերենում գրությունը հնչյունային էր, մասամբ էլ՝ ստուգաբանական, միջնադարում ավելանում է նաև ավանդականը:

XI—XII դդ. լայն ծավալ է ընդունում ձեռագրերի արտագրությունը, որի անթերի կատարման համար շատ կարևոր էր կայուն ու միասնական ուղղագրություն ունենալ, գիտական հողի վրա դնել գրավոր խոսքի օրենքները: Ուստի պատահական չէ, որ ժամանակի գիտունները քերականության գլխավոր նպատակն էին համարում ուղիղ գրելու կանոնների մշակումն ու կայունացումը<sup>1</sup>:

Գրչության լայն ծավալման հողի վրա ստեղծվում է, այսպես կոչված, գրչության արվեստը, որն արժարժում էր ոչ միայն տառատեսակների, գեղագրության, զարդերի, կազմարարական, այլև քերականական, ուղղագրական հարցեր<sup>2</sup>,

Միջին դարերում գրաբարը դադարել էր ժողովրդական-խոսակցական լեզու լինելուց, մնացել էր իբրև գրոց, լեզու, տարածվել էր միջին հայերենը, որ իր հնչյունային կազմով և քերականությամբ տարբերվում էր գրաբարից: XI դ. հետո հանդես են գալիս նաև միջին հայերենով գրված զանազան բնույթի գործեր՝ գեղարվեստական, բժշկական, նույնիսկ դատաստանագիրք: Եվ թեև դասական մատյանները արտագրող գրիչներն ամեն կերպ ձգտել են հարազատ մնալ դրանց ուղղագրությանը, սրբությամբ պահպանել և հետևորդներին հանձնել նախնյաց մատենագրությունը, այնուամենայնիվ շեն կարողացել խուսափել բանավոր խոսքի ազդեցությունից: Այդ են վկայում այն բազմաթիվ ու բազմազան ուղղագրական շեղումները, որ նկատվում են այս դարերի գրչության մեջ:

Թեև միջին հայերենը հասել էր արդեն պետական լեզվի աստիճանին, սակայն օրինականը դասական գրաբարի ուղղագրությունն էր: Այս դարերի քերականները, ինչպես Արիստակես Գրիշը, Գևորգ Սկեռացին ուղղագրական կանոնները սահմանում են ոչ թե ժամանակի արտասանության, այլ դասական հայերենի գրության հիման վրա: Նրանք սովորեցնում էին նախնյաց ավանդա-

<sup>1</sup> Գ. Զահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատություններ հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954, էջ 221—230:

<sup>2</sup> Լ. Խաչերյան, Գրչության արվեստի լեզվական-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում:

կան գրություններ: Ահա այս առթիվ ի՞նչ է գրում Ն. Ադոնցը. «Կիլիկիայի շրջանում, երբ խոսակցական լեզուն համարձակ կերպով իր համար ճանապարհ էր բաց անում գրականության մեջ, թվում է, թե պիտի հաղթանակեին ուղղագրության այն նորմաները, որոնք համապատասխանում էին հնչյունային համակարգին: Սակայն ինչպես նոր լեզվին չհաջողվեց բարձրանալ մինչև գրականության բարձունքը, այնպես էլ նոր նորմաները պիտի իրենց տեղը զիջեին հին կարգին: Մի շարք աչքի ընկնող գրիչներ, որոնք դուրս էին եկել Սկևռյան դպրոցից, սովորելով հնագույն ժառանգությունները, շրջվեցին դեպի հինը և վերականգնեցին գրության իրենց օրն ապրած նորմաները»<sup>3</sup>:

Ն. Ադոնցը գրաբարի ուղղագրության երեք շրջան է հիշատակում. նախաբազրատունյան, երբ գրությունը հնչյունային էր, բազրատունյան, երբ այդ գրության մեջ նկատվում են շեղումներ և ետբազրատունյան, երբ այդ շեղումներն ընդարձակ ծավալ են ստանում<sup>4</sup>: Մենք խոսելու ենք ետբազրատունյան շրջանի մասին:

Հայերենի ուղղագրության մասին մեզ հասած առաջին գիրքը Արիստակես Գրչի «Վերլուծութիւնք բացերեւապես բազմազան բառից եւ բայից...» XII դ. աշխատությունն է<sup>5</sup>, ուր հեղինակը ներկայացնում է ինը ուղղագրական կանոն «յ» տառի գրության մասին՝ տեղ-տեղ ակնուրկելով նաև լ, դ, ե, է տառերի, հոգերի գրությունը, և մի փոքրիկ բառարան, որը և՛ ուղղագրական է, և՛ բացատրական: Դա մեր առաջին բառարանն է: Այդ կանոնները համառոտ հանգում են հետևյալին: Հայերենում բառերը սովորաբար ա, և (նաև ե, ը) տառերով շեն վերջանում, բառավերջում ա, ո տառերին հաջորդում է յ վերջնատառը, որը պահպանվում է նաև բառի ածման ժամանակ: Յ տառը չի ավելանում հրամայական եղանակի բայերին (աւգնեա՛, փութացո՛ւ), դերանուններին (սա, դա, նա), ահա, հա. կա եղանակավորող բառերին, ա, ո տառերով վերջավորվող այն անուններին, որոնք ենթակա են (Յուդա մատնեաց զտէր), ուղևորման տեղի պարագա (երթամ ի Կիլիկիա) և տեղի պարագա ներգոյականի իմաստով (այս ինչ դիրագին է յՈւռհա, յԱքքա): Այս վերջին կանոնները, որոնք թույլ են տալիս ա, ո տառերից հետո երբեմն յ տառը չգրել, արդեն իսկ շեղում էին դասական ուղղագրությունից: Ըստ պրոֆ. Ջահուկյանի՝ Արիստակեսը կատարեց ուղղագրական I բարեփոխությունը:

Ադոնցը նշելով, որ դասական հայերենում ա, և հնչյուններով վերջացող բոլոր բառերը ներփակվել են յ-ով, որը հետագայում չարտասանվելով՝ ունեցել է միայն ուղղագրական նշանակություն, գտնում է, որ այդ համը յ-ն պահպանվել է այն բառերում, որոնց ածման հետևանքով յ-ն ընկնում է բառամեջ և հնչվում է (տղայ-տղայոց), իսկ այն բառերում, որոնք ածման ենթակա չեն, բառավերջի համը յ-ն հետագայում չի գրվել, դրանք հրամայական եղանակի բայերն են, ցուցական դերանունները, ահա, կա, հա եղանակավորող բառերը<sup>6</sup>: Ուրեմն այս շրջանում բառավերջի համը յ-ն գրվում էր միայն այն բառերում, որոնց ածման ժամանակ այդ յ-ն ընկնում էր բառամեջ և հնչվում էր (արքայ-արքայի, դշխոյ-դշխոյական):

<sup>3</sup> Н. Адо́нц, Дионисий Фракийский и армянские толкователи, П.-град, 1915, էջ LXXI.

<sup>4</sup> Նույն տեղում, էջ LXVIII.

<sup>5</sup> Քննական տեքստը կազմել է Լ. Խաչերյանը, տե՛ս նրա նշված աշխատությունը:

<sup>6</sup> «Բանբեր գրականության և արվեստի», Բ գիրք, Պետերբուրգ, 1904, էջ 144.



Արիստակեսի ուղղագրական հիշյալ կանոնները XIII դ. նույնությամբ կրկնեց Դեոդոր Սկեռացին:

Սակայն որքան էլ ժամանակի գիտունները ձգտեին վերականգնել ու կաշունացնել դասական հայերենի ուղղագրությունը, այն արդեն խախտված էր: Գրավորից հեռացած բանավոր խոսքը մի կողմից, բարբառներն ու խոսվածքները մյուս կողմից իրենց կնիքն էին թողնում գրչության վրա: Ահա թե ինչու ուղղագրական շեղումներն ավելի շատ էին, քան ճիշտ գրությունը:

Այժմ տեսնենք, թե յ տառի ուղղագրության հիշյալ կանոններից ինչ շեղումներ են նկատվում:

Շարունակվում է բառավերջի համար յ տառի անկումը: Գրիչները, փորագրողները, հետեւելով հնչյունային գրությանը, հնչվող, այսպես կոչված համարյան չեն գրում: Օրինակներ՝ «Թ թագաւորութեան Սեպատա, ուղղ Վասակա, Ի ձեռն Գրգուրկա, թվ նլթ (990) (Դիվ., 3-րդ, էջ 41)»<sup>7</sup>, «ՆԺԶ (967) Թ. կանգնեցի (խաչս) Ի փրկութիւն ճոգտ իմո, որ կարգա զիս յիշեցէ» (ն. տ., էջ 122): «Ի վերա տանս հայոց» (Օրծ., 1029 թ., էջ 442)<sup>8</sup>, Մաշտոցի անվան մատենադարանի № 1001 ձեռագրում (IX դ.) ամենուրեք ի վերա է գրված, առանց յ տառի: X դ. № № 985, 1958, 2679, 2684, XI դ. № № 988, 10434, 1007, XII դ. № № 1890, 975, 4035, 468, 777, XIII դ. № № 2101, 556, 416, 2865, 4066, XIV դ. № № 108, 57, XV դ. № № 485, 415, 266, 994 ձեռագրերում, Գ. Հովսեփյանի, Լ. Խաչիկյանի հրատարակած X—XV դդ. հիշատակարաններում, Մառի, Օրբելու, Կ. Ղաֆաղարյանի, Ս. Բարխուդարյանի հրապարակած այս դարերի վիմագիր արձանագրություններում հաճախ են հանդիպում ա, ո տառով վերջացող բառեր՝ առանց յ տառի: Սզնիկ Կողբացու «Ճղծ աղանդոցում», 1959 թ. ծանոթագրությունների համաձայն, որ տրված է ըստ 1280 թ. № 1097 ձեռագրի, բառավերջի համար յ-ն չի գրված 796 բառում, 890 բառում շեղված է յ-ի գրությունը:

Շատ գրիչներ բառավերջի համար յ-ն չգրելով՝ այն չեն գրում նաև այդ բառերի աճման ժամանակ. ընծա, Երեմիա, սատանա, տղա, գրելով՝ դրում են նաև տղաի, Երեմիաի, սատանաի, ընծանել և այլն, թեև այս դեպքում յ-ն համար չէ: Մատենադարանի № № 1001, 1007, 2679 ձեռագրերում, Գ. Հովսեփյանի «Քարտեզ հայ հնագրության» գրքում բազմաթիվ են ծառաութենէ, զմարդկաին, հոռմանցոց, հառոթիւն, ծառաութիւն, յաստուածաին, Անանիայի, այժմ, վկաի և նման գրությունները, ուր բաց է թողնված յ տառը: Ըստ Սզնիկի «Ճղծ աղանդոցի» հիշյալ ծանոթագրության 1280 թ. № 1097 ձեռագրում 203 բառի բառամիջի ա, ո-ից հետո լսվող յ-ն չի գրված: Լ. Խաչիկյանի Հիշատակարանների առաջին և երկրորդ մասերում, որ ընդգրկում է 1400—1480 թթ., ա, ո տառով վերջացող 260 բառի ներփակող յ-ն չի գրված, իսկ 108 բառի՝ բառամիջի: Այսպիսի շեղումներ կան նաև վաղ շրջանի տպագիր գրքերում («Պարզատումար», 1512 թ., «Սաղմոսարան», 1565 թ., Շնորհալի, «Յս որդի...», 1643 թ., Ռիվոլա, «Բառգիրք», 1633 թ., և այլն):

Քիչ չեն դեպքերը, երբ գրիչները բառամիջում ու բառավերջում անհարկի յ են գրում: Դրա պատճառներից մեկը սխալ ստուգաբանությունն է: Գրիչնե-

<sup>7</sup> Այստեղ և այսուհետե նախադասություններն ու բառակապակցությունները բերվում են կրճատումներով, մեծատառերն ու կետադրությունը մերն են—Ս. Գ.: «Դիվան հայ վիմագրության», պրակ III, 1967, Կազմեց Ս. Բարխուդարյան (այսուհետև Դիվ.):

<sup>8</sup> И. Орбелин, Избранные труды, Ереван, 1963, (այսուհետև՝ Օրծ.).

րը ա հոգակապից հետո յ տառը գրում են, կարծելով, թե ա-ն նախորդ բաղադրիչի վերջնահնչյունն է. *սոդնապ*՝ № 266 (1468 թ.) ձեռագրի սկզբի էջերում գրված է՝ կառաբելայ ճասակ. երախալ մոռաց. հետագա էջերում գրիչը միացրել է այդ բառերը՝ յ-ն պահպանելով (կատարելաճասակ, երախալամոռաց), սրանց օրինակով էլ գրում է պտղալբեր, կալալալտ, փաղցրալծալն, սոալխաւս, կնկալսէր, կիսալմամ, գլխալցաւութիւն. վերսլգրեալ և այլն:

Այսպիսի գրության հանդիպում ենք նաև վաղ շրջանի տպագրության մեջ: Օրինակ՝ «Պարզատումարում» (1512 թ.) գրված է՝ պարզալտումար, կաղանկալցոյց, երազալցոյց, վերալղիւր. «Սաղմոսարանում» (1565 թ.)՝ մեծալբանեալ, ձեռնալտու, լիալծիգ, պնղալծիգ և այլն: Զաքարիա Ագուլեցու «Օրագրում» (XVII դ.)՝ Աղլալղալի, նոռլգեցի, Ձօրալգիւղ, ձեռալգիւր և այլն, նույնը և Վարդան Այգեկցուն վերագրվող առակներում: Նշանակում է բառամիջի յ-ն տվյալ դեպքում գրում են բառակազմությունը չիմանալով: Գլխացաւութիւն բառը սխալմամբ նմանեցնում են ծառայութիւն բառին: Այս բանը իր ժամանակին նկատելով՝ Արիստակես Գրիչը հինգերորդ կանոնում զգուշացնում է, որ նման դեպքերում յ չգրեն և բերում է օրինակներ՝ ի վերայ մեր, բայց՝ վերաստեղծաւղ, վերաբերաւղ:

Յ տառի անհարկի գրության մյուս պատճառը համաբանությունն է: Գրիչները հրամայական բայերի, դերանունների վերջում էլ են յ-ն գրում, նմանեցնելով մյուս ձևերին: Հենց որ բառը վերջանում է ա, ո տառերով, յ են ավելացնում՝ նկատի չունենալով արտասանությունը (նղուրմեալ, դարձոյ, դալյ, ցնալ, զնալ և այլն): Այսպիսի գրությունների ենք հանդիպում նաև վաղ շրջանի տպագրության մեջ («Սաղմոսարան», 1565 թ.), Շնորհալի, «ՅՍ որդի....», 1643 թ., 1687 թ. № 8443 ձեռագրում և այլուր:

## ԱԻ. Ո, Օ

V դ. առ տառակապակցությունը բաղաձայնին նախորդող դիրքում երկբարբառ էր և կարգացվում էր ՁՍ (աւձ, աւր, աւրէնք), բացի նալթ, աղաւնի բառերից: Սակայն փաստեր կան, որ երկբարբառը վաղուց է սկսել օ կարգացվել, որի պատճառով հաճախ աւ-ի փոխարեն ա-ի ենք հանդիպում, իսկ ո-ի փոխարեն աւ-ի: Ընթակայական դերբայի աւղ-ող վերջավորությունները զուգահեռ գրվում են դեռ V դ.: Անիի Ապուղամբենց Ս. Գրիգորի սլատին Գրիգոր Համգե Պահլավունու X դ. արձանագրության մեջ գրված է. «Քս ած յորժամ գաս փառոք (փոխ.՝ փառաք) հաւր ի նորոգել զերկիր» (Քար., էջ 13, Դիվ., 1-ին, էջ 31)<sup>9</sup>, Սանահնի 1011 թ. մի արձանագրության մեջ գրված է «Ի բարէխոսութիւն ինձ» (փոխ.՝ բարեխաւսութիւն, Սան., էջ 18)<sup>10</sup>, Մատենադարանի № 2679 ձեռագրի (Շիրակացի, 981 թ.) 25-րդ էջում գրված է Կոստանդնուպոլսի, իսկ 48Բ էջում՝ Կոստանդնուպոլսի: № 556 XIII դ. ձեռագրի 56-րդ էջում գրված է. «Ի ի տիտլաւէն ի կալիլաւէն», իսկ 58-րդ էջում՝ «Ի կալիլիկոսէն», № 57 ձեռագրում (XIV դ.)՝ Պաւղոս և Պողոս (էջ 313), Կ. Ղաֆաղարյանի «Հաղբատի»<sup>11</sup> 175-րդ էջում գրված է Բաւրիւնայի (1212 թ.), իսկ

<sup>9</sup> Գ. Հովսեփյան, Քարտեղ հայ հնագրության, էջմիածին, 1913 թ. (այսուհետեւ Քար.): «Դիվան հայ վիմագրության», սրակ I, 1966 թ.: Կաղմեց Հ. Օրբելի:

<sup>10</sup> Կ. Ղաֆաղարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1963 թ. (այսուհետեւ Սան.):

<sup>11</sup> Կ. Ղաֆաղարյան, Հաղբատ, Երևան, 1963 (այսուհետեւ Հաղ.):



176-րդ էջում՝ Բոբինայի (1200 թ.): Նշանակում է գրիչները բաղաձայնին նախորդող օհնչյուն աւ-ի և ու-ի միջև տարբերություն չեն տեսել՝ երկուսն էլ օհնչելով: Պատահում է, որ ու-ով սկսվող անուններն էլ են աւ-ով գրում՝ Աւրպելի, Աւսան, Աւշէ, Աւշական: Ու-ի փոխարեն աւ-ի հանդիպում ենք նաև բառամիջում: Օրինակ՝ «Յասպարապետութեանն Գրիգուրոյ (ՆԾ—981 թ., Ս. Ավ.)<sup>12</sup>, Գարեգին Ա Կաթողիկոսի (Հովսեփյան) «Յիշատակարանք ձեռագրաց» մեծարժեք գրքի 988 թ. հիշատակարանում (էջ 153) գրված է. «Ես Կիրակոս վաճառական յազնամեղ և անարժան»:

Ինչպես գրում է պրոֆ. Ա. Աբրահամյանը, աւ երկբարբառը նախ բանավոր խոսքում է փոխվել օհնչյունի և, քանի դեռ օ տառը չենք ունեցել, արտահայտվել է ո տառով<sup>13</sup>, որը մինչև ուշ շրջան օ էր կարդացվում նույնիսկ բառակազմում, երբ արդեն վօ-էր կարդացվում: Միջնադարում տարածված գրություններ են Ոհան, Ովանէս, Ուտին, Ոսաննա, ուր ու-ն օ էր կարդացվում: Այսօր էլ ով-ը օվ ենք հնչում:

Հետաքրքիր է, որ երբեմն աւ տառակապակցության փոխարեն հանդիպում ենք ու տառին, որը աւ, ո, ու հնչյունափոխության հետևանք է<sup>14</sup>: Օրինակ՝ «Սմբատ շահանշահանի ճգուրի» (1028 թ., Քար., էջ 13) «զիս յաղութս յիշեսչիք... գուգնական եղես» (Ս. Ավ., XI դ.): Որս բառը № 416 (Հերացի, 1279 թ.), ձեռագրում հանդիպում է նապա, նոպա, նուպա ձևերով, ինչպես որ կան տաւմաբ, տօւմաբ, տոմաբ, տոււմաբ գրությունները: Այս բոլոր դեպքերում նախ տեղի է ունեցել աւ>ո հնչյունափոխությունը, ապա՝ ո>ու (աղաթ-աղոթ-աղութ), վերջինս հատուկ է Թիֆլիսի (շոր-շուր, փոր-փուր), Աղուլիսի, Ղարաբաղի բարբառներին (հորթ-հուրթ, ախոռ-ախուռ): Ռիվոլայի վերը նշված «Բառագրութ» կան՝ ոծով, ոծովնալ, ոսով մարդ, ոսին յորած, ողաբառ, ողալաւան և այլ նման գրություններ: Եթե սրանց ավելացնենք և այն, որ մինչև օ տառի մուտքը ենթակայական դերբայի օվ վերջավորությունն էլ արտահայտվում էր աւղ և ող տառակապակցություններով, պարզ կդառնա, թե որքան հաճախ էին օհնչյուն աւ-ը և ու-ն միմյանց փոխարեն գործածվում:

Այսպես ուրեմն, աւ երկբարբառի պարզ օ հնչյունի փոխվելն արդեն փաստ էր X դ.<sup>15</sup> Օ-ն արտահայտվում էր կամ աւ տառակապակցությամբ, կամ ո տառով: Թե ե՞րբ սկսվեց օհնչյուն աւ-ը օ տառով արտահայտվել, դժվար լուծելի հարց է, դրա համար պիտի ուսումնասիրել բոլոր ձեռագրերը, որոշել նրանց ժամանակը, որ ձեռագրերը ցրված լինելու պատճառով մի մարդու համար անհնար է: Մեր ընթերցած X դ. №№ 2684, 2679, 1001, 985, 10099, 5547, 1958, XI դ. №№ 1034, 1007, 988 և այլ ձեռագրերում, Գ. Հովսեփյանի, Մառի,

12 Ս. Ավագյան, Հայ վիճական արձանագրությունների հնչյունաբանական առանձնահատկությունները 10—14-րդ դարերում, դիս. աշխատ. տախտակը, 1971 (այսուհետև Ս. Ավ.):

13 Ա. Աբրահամյան, Փաստեր հայերենի պատմական հնչյունափոխության մի քանի երևույթների ժամանակաշրջանի վերաբերյալ, ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1957, № 4:

14 Այս և ընդհանրապես միջնադարի հայերենի մի շարք հնչյունափոխությունների հմուտ քննությունը տե՛ս Ա. Ավագյան, նշվ. աշխ.:

15 Գրիգոր Մագիստրոսը տեսնելով, որ աւ-ը օ է կարդացվում (աւրհնել, կրամատր), զարմանում է, որ Մաշտոցը նրա համար առանձին տառ չի ստեղծել, չիմանալով, որ բաղաձայնից առաջ աւ-ը երկբարբառ է եղել (au): Ուրեմն դեռ Մագիստրոսից (XI դ.) առաջ բաղաձայնին նախորդող դիրքում աւ-ը օ է կարդացվել, Այս մասին տե՛ս Գ. Զահուկյանի նշված աշխատությունը (էջ 218):

Օրրելու, Ղաֆադարյանի, Բարխուդարյանի հրապարակած հիշյալ հիշատակարաններում ու վիժմագրություն մեջ օ տառին չենք հանդիպել։ Աշոտ շահնշահի դստեր՝ Հռիփսիմի 971—81 թթ. գրած կտակագրի հետագա արտագրողը մի քանի բառերում օգտագործել է օ տառը, բայց նկատելով, որ բնագրում այլ է, ուղղել է իր սխալը<sup>16</sup>։ Գ. Հովսեփյանի «Յիշատակարանք ձեռագրաց» գրքի 1007 թ. № 84 հիշատակարանում գրված է. «զՊոռքսիմոսն յաղօթս յիշեցեք» (էջ 201)։ Այս նույն հիշատակարանն իր «Ցուցակում» հրատարակել է նաև Բ. Սարգսյանը, բայց այստեղ տպագրված է յաղալքս ձեռվ (էջ 517)։ Հովսեփյանը բերելով էջմիածնում գտնված բյուրեղյա խաչի 966 թ. մակագրությունը («Յիշատակարանք», № 52), ուր օգտագործված է նաև օ տառը, գրում է, թե սուս բուրդովին վավերական չի թվում մեզ։ «Յիշատակարանքի» № 27 հիշատակարանում, որ հնագույն է համարվում, մի բառ կա օ տառով (յանօթ, էջ 167)։ Այս հիշատակարանը, սակայն, հեղինակը վերցրել է Ալիշանի «Հայապատումից» (էջ 309), ուր աւ-ի փոխարեն ընդհանրապես օ է տպագրված, Հովսեփյանը բոլոր բառերում օ-ն դարձրել է աւ և միայն այդ մի բառում է մնացել օ, որ փաստորեն վրիպել է։ Այդ գրքի X դ. և ավելի վաղ համարված մի շարք հիշատակարաններում հանդիպում ենք օ տառին, բայց դրանք անթվակիր են, և հեղինակը նրանց ժամանակը որոշել է՝ ելնելով բովանդակությունից։ Մինչդեռ X դ. ՄՄ 63, 67, 69, 70, 71, 72, XII դ. ՄՄ 94, 95, 97, 100, 103, 107, 109 հիշատակարաններում, որոնք սկզբնագիր են և որոշակի թվագրված, օ տառին չենք հանդիպում։

Օ տառի գործածության սկիզբը որոշելու համար կարևոր ենք համարում բերել 1280—1286 թթ. մի ձեռագրի 1848 թ. արտագրող Պողոս Պետրոսյանի դիտողությունը, ուր նա 1280-ական թվականներին օ տառը նոր հնարյալ է համարում։ «Ի ժամանակին գրչութեանս,— գրում է նա,— երեւի յոյժ նոր հնարեալ տառ օ, որ ուր ուրէք աւ գտանէ, դարձուցանէ ի օ, որպէս հօ, նօ, նօօն, այսինքն հաւ, նաւ, նաւան և այլն»<sup>17</sup>։ Եթե գրիչը 1280 թ. ձեռագրում հանդիպած օ տառը համարում է այոյժ նոր հնարեալ, ապա դրա գործածության սկիզբը XII դ. այն կողմ չի անցնի։ Նույնիսկ XII, XIII դդ. այն մատյաններում, որոնք արտագրություն են դասական շրջանի գործերի, օ տառին չենք հանդիպում, որովհետև գրիչներն ամեն կերպ աշխատել են հարազատ մնալ նախնեաց գրությունը։ Իբրև օրինակ կարող ենք բերել ՄՄ 823 (1266 թ.), 975 (1194 թ.), 468 (XII—XIII դ.), 1746 (1280 թ.), 1747 (XIII դ.), 777 (XII դ.), 2102 (1223 թ.) և այլ ձեռագրեր։

Ելնելով վերը հիշատակված աղբյուրներից, կարելի է ասել, որ օ տառը սկսել է օգտագործվել մոտավորապես XII դ.։ Այս դարում արդեն այն հանդիպում է սկզբում հատուկեմտ, իսկ հետո՝ հաճախակի, մինչև որ համապատասխան դիրքում դուրս է գցում օհնչյունն այլ տառակապակցությանը։ Բերենք օրինակներ։

էջմիածնի նոյի պահարանի վրա գրված է. «Եւ Դաւիթ աղգաւ Պաօղոսի գոյն զգոյն օրինվածօք զարդարեցի զպահարանս նոյան, թվ. ՌՃԽէ—1147 (Քար., էջ 19)։ № 4035 ձեռագրում հանդիպում է ցօղ գրությունը № 416 ձեռագրում (1279 թ.) ընդհանրապես օգտագործված է օհնչյունն այլ տառակա-

<sup>16</sup> Տե՛ս Հայաստանի պետական արխիվ, ֆոնդ 57/133.

<sup>17</sup> Զ. Յ. Տաշյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց, Վիեննա, 1895, էջ 557.



պակցությունը, միայն 29-րդ էջում տողավերևում հետագայում ավելացված է լծն՝ րաոր, Ձեռագրի դեղերի ցուցակում, որ ըստ երևույթին հետագա գրություն է, մի քանի օտար բառեր դրված են օ տառով (սաբգօզալա, տրագօնիս, կօզմօրուէ) ու երկու հայերեն բառ (չօր, դօզ): Այդ ձեռագրի սկզբի էջերում հանդիպում են՝ օն, օր, շափօվ, բայց սրանք էլ ուշ շրջանի գրություն են: Սակայն XIII դ. մյուս ձեռագրերում օ տառի գրությունը սովորական է: XIV դ. №№ 57, 485, 1748 ձեռագրերում, Նսայի նշեցու «Վերլուծութիւն քերականութեան» 1330 թ. (№ 6897) և 1360 թ. (№ 336) ձեռագիր տարբերակներում, Գ. Հովսեփյանի հրատարակած XII—XIV դդ. հիշատակարաններում, վիմական արձանագրություններում, XV դ. №№ 415, 266, 994 ձեռագրերում ավելի շատ օ-ն է հանդիպում, քան օ հնչյուն աւ-ը (ի հօրէն, զօրութիւն, օգտեաց, անծանօթս, աղօտ, յօղի, զօրաց, օրհնեա, ֆօղ, շօշափումն, մօր, օր, կարօտ, աղեօֆ, իրօֆ, օրէնս և այլն): Ի. Խաչիկյանի «Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» գրքի Ա և Բ մասերում օհնչյուն աւ տառակապակցությունն օգտագործված է 717 բառում, իսկ օ-ն՝ 932 բառում:

Թեև Արիստակես Գրիշը կանոն էր սահմանել, որ ենթակայական գերրայր ուղիղ ձևում դրվի աւ վերջավորությամբ, իսկ թեք ձևում՝ ող (ազղաւղ, բայց ազղաղաց) և հետագա քերականներն էլ այն պահպանում էին (օրինակ՝ Կղեմես Գալանոս և այլք), բայց գրիչները չեն հետևում այդ կանոնին և գրում են՝ ծաղկաղ, սիրաղ, ընթերցաղ, ծնաղ նաև՝ յիշաւղացդ, ծնաւղաւֆ, ցանկացաւղացդ, գծօղ, գօրացօղ, ծնօղաց և այլն: Օ տառի կիրառությունը քանի գնում տարածվում է, և XVI—XVII դդ. ձեռագիր ու տպագիր գրականության մեջ գերիշխող է դառնում օհնչյուն աւ-ի նկատմամբ: Այդ եզրակացության ենք հանգում «Պարզատումար», Շնորհալու «Յս որդի...», Հովասափ Սեփարաստացու բանաստեղծությունների դիրքը կարդալով: Ոսկանի «Քերականութիւն», «Արհեստ համարողութեան», «Պարզաբանութիւն Սաղմոսացն Դավթի» գրքերում օհնչյուն աւ-ի համարյա չենք հանդիպում, օգտագործված է օ տառը: Օգտակար տեղեկություն են տալիս միևնույն մատյանի տարբեր ժամանակների ձեռագրերի համեմատությունը: Նղիշեի Պատմության 1174 թ. № 1890 ձեռագրում օ տառին չենք հանդիպում, իսկ 1569 թ. № 1920 ձեռագրում ամենուրեք օ տառն է օգտագործված:

Պատմահայր Խորենացու Հայոց պատմությունը № 2865 ձեռագրում երկու իրարից հեռու ժամանակներում է արտագրված, ըստ Աբեղյանի մի մասը XIII—XIV դդ. է, մյուսը թվագրված է 1565 թ.: Բնորոշ է, որ այդ մասերը ամենից առաջ ուղղագրությամբ են իրարից տարբերվում: Հին ձեռագրում օգտագործված է օհնչյուն աւ տառակապակցությունը, իսկ նորում՝ օ տառը: Այդ ձեռագրում միևնույն բառի համար ստացվել է երկու գրություն՝ զաւրֆօրֆ, աւզաւտօզաւտ, խաւսիւֆֆ—չաւաիսուէին, աւտաւօտաւ, ընտանեաւֆն—ընտանեօֆ, զայսաւրօզօր և այլն: Այս բոլորին պիտի ավելացնել նաև օտարազգի բառերը, որոնք XIII—XVII դդ. գրվում էին օ տառով (Օլիմպիաս, մետրօպոլիտ, պրօտօփրանտէ, նիկօլաս, Մօսկով, Պօլիս, Բօնօֆացիոս, Սիօն, Ֆլօր, Շամօն, Գօրգի և այլն): Հովհաննես Կոստանդնուպոլսեցին, ընդհանրապես օ տառն օգտագործելով, օտարազգի օ-ն էլ հայերենում օ-ով է արտահայտում՝ nox>նօքս «գիշեր», Leo>լէօ «առյուծ», oratio>օրացիո «աղոթք», moeror>մէրօր «տխրություն» և այլն:

Սակաւն օ տառը հնչտությամբ շտարածվեց: Երկար ժամանակ օհնչյուն ւաւ, ու, օ տառերը, իբրեւ միեւնույն հնչյունի գծային պատկերներ, զուգահեռաբար գործածվում էին: Նույնիսկ միեւնույն գրչության մեջ միեւնույն բառին հանդիպում ենք և աւ, և ու, և օ տառերով (օրինակ՝ ծնաւդ, ծնող, ծնող): Խախտվել էր դասական հայերենի հնչյունային գրությունը, յուրաքանչյուր հնչյունին մի տառ, յուրաքանչյուր տառ մի հնչյունի համար սկզբունքը: Միեւնույն ւաւ տառակապակցությունը և օ էր կարդացվում. և ալ (աւր-օր, աւագաւադ), ո տառը՝ օվ. և օ (որպէս-վօրպէս, սովորական-սօվօրական): Այս հանգամանքը սխալների տեղիք էր տալիս, մանավանդ եթէ գրիչն էլ թերուս էր լինում: Այդ սխալները կարելի է հետևյալ խմբերով ներկայացնել:

1. Շատ գրիչներ չեն տարբերում օհնչյուն աւ-ը (աւր, աւծ) ձայնավորից ու բաղաձայնից բաղկացած աւ տառակապակցությունից (նաւ, աւագ) և հաճախ վերջինիս փոխարեն գրում են օ տառը, քազաւոր, լաւ, նաւ և այլն գրելու փոխարեն գրում են լօ, նօ, քազօր: Օրինակ՝ ԱՆ 4035 (XII դ.), 4066 (XIII դ.), 108 (XIV դ.), 415 (XV դ.), 266 (XV դ.), 1920 (1569 թ.) ձեռագրերում հանդիպում են՝ քազաօր, ցուցօ, քազաօւրաց, գալաօտօրն, իրօն, բնօին, մեծօւրաց, յօխնեից, ըստացօ, լուսօրէ, հօաբեալ, օելի, դօրի, օուրս, կրօնօրի, յօուր, տեսօ, շնչօր, գօառաց, փառօրն, օէրէր և այլն: Երբեմն գրիչը շփոթվելով՝ և օ-ն է գրում և աւ-ի ւ-ն: Օրինակ՝ Գոռլանան զինչս հօւր» (Իմա՝ հաւր, հօր, ձեռ. № 485, էջ 176): Ուղղագրական այս սխալը կրկնվում է նաև ուշ միջնադարում: Այս սխալը հիշատակում է նաև Մառը<sup>18</sup>, որ խոսելով վարդան Այգեկցուն վերադրվող առակների մասին, նշում է, որ ձեռագրերի տարբերակում (XVII դ.) գրիչը սխալմամբ գրում է՝ անջնացօ. հանդիպեցօ, ձանծացօ, հարեօ, անհօատարմութիւն, ելօ և այլն:

2. Բառամիջի ո տառի փոխարեն գրում են աւ: Խաչիկյանի Հիշատակարաններում հանդիպում են՝ զՀաւոռփսեմն, զԹաւրոսն, զԱւշական, Մեծաւփա, նույնիսկ՝ Մեսրապ: Ռիվոլայի «Բառգրքում» հանդիպում են՝ լաւդ, խաւշոր, խաւրհուրդ, կալսել, մաւրեխ, մաւրթ, գաւրծ, դաւլ, նույնիսկ՝ դաւցա, նաւցա, գաւրա, մաւմ, Սաւկրատ, հաւիւ, զաւվանալ, թաւիչ, ժաւդաւվել և այլ ձևերը:

3. Շփոթում են ո և օ տառերը՝ մեկի փոխարեն գրելով մյուսը: Օրինակ՝ կրոնաւոր, եղբորն, մարմնօվ, հոգօվ, ջրօվ, նույնիսկ՝ օվ (օվ առնու, օվ ուտէ, (Ձեռ. № 266, 203, 205), որդօյ (Հաղբ., էջ 172):

4. Բառասկզբի վօհնչյուն ո տառի փոխարեն էլ երբեմն աւ է գրված լինում: Օրինակ՝ № 415 ձեռագրում գրված է աւաթիս, աւրովայնն, աւղնաշարն, աւտնին, Ռիվոլայի «Բառգրքում»՝ աւրղի, աւրոնել, աւրոտ, աւսկի:

Օհնչյուն աւ-ը ձայնավորի ու բաղաձայնի աւ տառակապակցությունից տարբերելու համար գրիչները ստեղծել են օ, ա, յ նշանները: Եթե աւ-ը տիտի օ կարդացվի, վրան դնում են օ կամ օօ, իսկ եթե աւ՝ յ նշանը: Օրինակ՝ № 556, 1749 ձեռագրերում հանդիպում են՝ աւգտեցուցանէ, աշխարհականաւք, բայց՝ ասացաւ:

Շնորհալու «Յս որդի...» գրքում՝ յաւժար, ծնաւդին, բայց՝ խաւարեցաւ, երկացաւ: Հետաքրքիր է, որ այստեղ երբեմն գրիչը աւ-ի փոխարեն օ է

<sup>18</sup> Н. М а р р, Сборник Притч Вардана, Петербург, 1899.



գրում և վրան՝ այդ նշանը (խօսարանան, խորտակեցօ)։ Այս նշանակում է, որ հիշյալ դիրքում աւ-ը և օ-ն ավ են կարդացել, թաղասոր գրել թագաւոր են կարդացել, եթե բօարարը boarar կարդալին, ո՞ր հայր կհասկանար։

Երբեմն օհնչյուն աւ-ի փոխարեն ուղղակի օ նշանն են օգտագործել։ Սրինակ՝ նչեցու սվերլուծութիւնը քերականութեան» ձեռագիր տարբերակներում հանդիպում ենք՝ Ծրինակ, ուղղախօսել, զստացօղն, հօօր, օփ, նուլնիսկ Մաշգոց, Բոսէփ, Ստեփանօս և այլն<sup>19</sup>։

Ե, է

Այս երկու տառերը դասական հայերենում գրեթե նույնահնչյուն են եղել, թեև ունեցել են գրության իրենց որոշակի տեղը։ Այսօր էլ բառամիջում նրանք համահնչյուն են։ Միայն միջնադարից է սկսել ե-ն բառասկզբում յե հնչվել։ Չնայած քերականները գրել են այդ տառերի գրության կանոնները, օրինակ, եթե բառամիջի օ-ն հնչյունափոխության ենթակա է, դրվում է է տառով, բառը ե-ով չի կարող վերջանալ և այլն, այնուամենայնիվ գրիչներն ավելի շատ հնչական գրությանն են հետևել, քան՝ դասական-ավանդական կամ ստուգաբանական, որի պատճառով բազմազան ու բազմաթիվ են ուղղագրական շեղումները։ Թվենք այդ շեղումները։

1) է տառի փոխարեն հանդիպում է ե տառը։ Բառասկզբի դիրքում՝

ա) Եմ բայի ներկա ժամանակի եզակի երրորդ դեմքի և անցյալ ժամանակի ձևերում։ Օրինակներ. № 1007 ձեռագրից՝ «ըմբռնեալ եին» (էջ 2), «խոնարհ եին» (էջ 4ր), № 2684 ձեռագրից՝ «Իբրև զձեզ եի» (էջ 14բ), «ոչ եիք գեղեցիկ» (էջ 44), № 985 ձեռագրից՝ «ես չեի, անդ ես եի» (էջ 29ա)։ «Ձինչ որ իւր կարողութիւն ե» («Յիշատակարանք», 1217, էջ 791)։ Այս նույն ձևերը կան նաև X դ. №№ 2679, 958, XI դ. № 10099, 10434, XII դ. № 1890, 975, 777, XIII դ. № 1097, 468, 488, 1746, 1747, XIV դ. № 1748 ձեռագրերում, Սեբաստացու բանաստեղծություններում, Գանձակեցու Պատմության մեջ, ինչպես և վիմական արձանագրություններում։ Հետաքրքիր է, որ Արիստակես Գրիչն էլ է այս ուղղագրությունը հետևում, գրելով՝ առեալ եիք, առեալ եաք, ագահ եիր։ Գրիչը ելնում է բառը աճելիս է>ե հնչյունափոխությունից, ուստի գրում է՝ աւէ, աւեիւն, ինչպես ամէն, ամենակալ։

բ) Անցյալ կատարյալ ժամանակի ձայնավորով սկսվող միավանկ բայերի սկզբում իբրև հենարան։ Օրինակներ. № 1684 ձեռագրից՝ «Յինքն եառ» (էջ 25), «ձմեռն եանց» (էջ 68ա, 73, 107) և այլն։ Այս ձևերը կան նաև № № 2679, 1958, 468, 2865 ձեռագրերում, Գ. Հովսեփյանի «Յիշատակարանքում» և Արիստակես Գրիչի գրքում։

Հետաքրքիր է, որ երբեմն ձեռագրերում ե հենարան են ունենում ձայնավորով սկսվող նաև բազմավանկ բայերի անցյալ կատարյալի ձևերը, որ հազվագեպ է։ Օրինակներ. № 1958 ձեռագրից՝ «Այսուհետև եարաք զհանդերձեալսն» (էջ 26), «զայս եարաք» (էջ 26գ), «ինքն էր, որ եասաց Յովբայ» (էջ 100) և այլն։

գ) է տառի փոխարեն ե-ն է հանդիպում նաև է հնչյունով սկսվող այլ բառերում։ Օրինակ՝ «եալկն ի վերա ամենայնի աստուած բարեբանեալ» (ձեռ. № 1958, էջ 48), «փառք փառաց անեղին երիցս ի միում եուրեան» (Մարթ, 1,

<sup>19</sup> Ե ս ա յ ի ն չ ե ց ի, վերլուծութիւնը քերականութեան, 1966 թ., էջ 137—182-ի ծանոթագրությունները։

Տ դ. ԺՅ: № 1007, 1958 ձեռագրերում հանդիպում ենք Խմմանուիլ ձևին, № 1748 ձեռագրում՝ Ելլադա, Եպիդեմիա: Այսպես գրում է նաև Արիստակես Գրիշը:

Բառամիշի գիրքում՝

ա) Բալի անցյալի անկատար ժամանակվա ձևերում, որ դարձյալ հնից է գալիս, ինչպես եմ բայինք: Տ դ. № № 1001, 2684, 985, 2679, 1958, XI դ. № № 1007, 10099, 10434, 988, XII դ. № № 1890, 975, XIII դ. № № 1097, 823, 2865 ձեռագրերում, վիմագիր արձանագրություններում, հիշատակարաններում սովորական են այնպիսի ձևեր, ինչպես, օրինակ, ծնանեիր, մատչեին, կարեին, ասեին, աղաղակեին, մարտընչեին, դնեին, պատռեին, վաճառեին, ապստամբեին, հանդուրժեիր, ունեի, տեսանեի, հայտներ, փակեիր, սպաներ, լինեին, և այլն: Այսպես է գրում Արիստակես Գրիշը (զարդարեի, զարդարեին, զդացուցանեի, զգացուցանեին, աւետարանեի, աւետարանեին):

բ) Բալի հրամայական եղանակի հոգնակի թվում: «Մատուցանեք զիս» (Դիվ., 3-րդ, էջ 151): Դարձյալ ասե, պատրաստեցեք, Յիշեցեք զմեզ» (Հաղբ., 1279 թ., էջ 265), «Գրիշս յիշեք և խնդրեցեք» մեղաց թողութիւն» («Յիշատակարանք», 1007 թ., էջ 201):

գ) Մի շարք բառերում (որպէս, ինչպէս, պէտք, կայէն, հրէա, Տիմոթէոս, Թէոդոս, Եղիսէ, ամէն, Իսրայէլ, Դանիէլ, Երուսաղէմ և այլն):

Օրինակ՝ № 2684 ձեռագրի 12բ էջում գրված է. «Եթե սա է Թագաւորն հրեից» և «հրեից է սա Թագաւոր»: 8-րդ էջում՝ «մարգարէանաս», 22-րդ էջում՝ «մարգարեից»: Միևնույն ձեռագրում միևնույն անունները պատահում են թե՛ ե, թե՛ է տառերով: Օրինակ՝ № 1958 ձեռագրում՝ «ընդդէմ Իսրայելի» և «յիսրայէղէ» (էջ 39, 41, 48): «Սա է մարգարէին դարձեալ» և «ի նմին իսկ մարգարեին գոչաղն» (էջ 46) և այլն:

Տարածված են բարեպաշտ, բարեխաւսութիւն, բարեկամ, բարեկարգ, բարեգործ և բարեպաշտ, բարեխաւսութիւն, բարեգործ, բարեկամ, բարեկարգ և այլ զույգ ձևերը:

Դասական հայերենում բառերը ե տառով չէին վերջանում, մի բան, որ պահպանվեց նաև հետագայում (մինչև 1922 թ.): Բայց միջնադարում այս կանոնն էլ խախտվեց: Մեր նշած ձեռագրերում, հիշատակարաններում ու վիմագրություններում ամենուրեք հանդիպում ենք՝ րբ, երբ, միքբ, ասե, գոչե, ի մարդկանե, յառավելութենե, ի քահանաութենե, յասանե, խոնարհե, փոխե, կամիցե, յառնիցե և նման այլ դրույթությունների: Օրինակ՝ «Թե փոխե» (ձեռ. № 1007, էջ 23), «Որչափ կամիցե քեզ» (№ 4066, էջ 392ր), և ասե ցնա (№ 975, էջ 7բ), տեսանե (էջ 36), Մարգարեն գոչե (էջ 280բ) և այլն:

2) Ե տառի փոխարեն հանդիպում է է տառը:

ա) Անցյալ կատարյալ ժամանակի բաղաձայնասկիզբ բայերից առաջ, իբրև հենարան, Հաղբատի, Սանահինի, Ավանի, Անիի, Զանգեզուրի վիմական արձանագրություններում, Ռիվոլայի «Բառգրքում», հիշատակարաններում հանդիպում են էթող, էտու, էհան, էբեր, էհաս, էգիտ, էգեր, էբաց ձևերը, ուր ե-ի փոխարեն գրված է է տառը:

բ) Եմ բայի ներկա ժամանակի եզակի և հոգնակի ձևերում՝ էն, չէն, էնք և այլն: «Ի հարս էն սիրեցեալ» (ձեռ. № 2684, էջ 118), «պատմիս ինձ էն վանձինս իմոց բիծ» (№ 4035, էջ 117): «Որում չէն մարթ լինել» (№ 1097, էջ

20 Н. М а р р, Новые материалы по армянской эпиграфике, II-бурж, 1893.



96)։ «Ուղում լն, տալիս շնն», «գնում էմ, դիվանս անում շնն» (Զաքարիա Ագուլսցի)։

դ) Մի շարք բառերի սկզբում՝ էկեղեցի, էրեց, էպիսկոպոս և այլն։ «Էնուլ յուլետս կտակարտնաւք Էկեղեցականաւք», «ընչից էկեղեցոյս» (Օրծ., 1029 թ., էջ 443)։ ՉՍարդիս էրեց յիշեցեօ (Դիվ., 2-րդ, 1407 թ., էջ 50)։ Ես Ղազար Լուվանցի կանդնցի զխաշս թվ. ՌՂ (1581) (Դիվ., 2, էջ 134)։

Բառասկզբում և տառի փոխարեն է դրելը երկու պատճառ ունի, մեկն այն է, որ եմ բայի սկզբում ե-ն ու է-ն նույնահնչյուն են՝ եմ-էմ, ենք-էնք, մյուս պատճառը բարբառային արտասանությունն է, ասում են՝ էթէ, էրեց, էկեղեցի, Լդա, և այդպես էլ դրում են։ Հովհաննես Կոստանդնուպոլսեցին օտարազգի e-ն հայերենում արտահայտում է և տառով՝ Nebula-նէպուլա, Vena-վէնա, Medicus-մէսիկուս, Culter-քուլթէր և այլն։

դ) և տառի փոխարեն է-ն է հանդիպում նաև բառամիջում, ուր սովորաբար և տառն է դրվում։ «Փոխէցա առ ած» (Օրծ., էջ 69)։ Սանահինի, Հաղբատի վիմական արձանագրություններում, № 2684 ձեռագրում հանդիպում են՝ տիէ-ղևրապատիր, տիէղեբաց, դրէն, ասէն, երգէցի, յայտնէն, յաղէրէ, բնութէնէն, Դէմլթէ, փոխարէն, շորէքկուսի, երէկ և այսաւր, յայսմհէտէ, յիշէցէք, աւետիս, Բէրդէցի գրությունները։ Պարզատումարում՝ սեպտէմբեր, հոկտէմբեր, նոյրբր, դեկտէմբր։ Ռիվոլայի «Բառգրքում» միևնույն բառը թե՛ է-ով է պատահում, թե՛ ե-ով (աղեկ-աղէկնալ, այրել-այրէցեալ, քերթած-քերթողութիւն-քէրթոց, նաև՝ անէրես, արեւէեան, արեւէցի, ցէրէկ, և այլն)։ Զաքարիա Ագուլսցին գրում է՝ տէղ, բնդէր, բէրան, երէխա, բէրթ, արդարութէնէ և այլն։ Այս բոլոր դեպքերում դրոգները հետևում են հնչյունային գրությանը։

—Ը—

Ը տառով սկսվող բառերը բարդվելիս կամ ածանցվելիս ը-ն պահպանում են (նորրնծայ, որոտընդոստ, արըստարէ, ամենաընտիր և այլն)։ Մյուս դեպքերում լսվող ը-ն չէր գրվում (ղդոյշ, սկսել, մատենագրութիւն և այլն)։

Սակայն այս կանոնից շեղումները միջնադարում սովորական են դառնում։ Դրանք երկու բնույթի են։

1) Անհարկի դրություն (հավելագրություն), երբ գրիչները, հետևելով հընչական գրությանը, ծայրահեղության են հասնում և ճ գրում են նաև այն դիրքերում, ուր սովորաբար չի գրվում։ Դա հանդիպում է.

ա) Բառասկզբի սկ, ստ, սպ, շտ, դգ տառակապակցություններից առաջ։ Օրինակներ. ըսպառաղինութեամբ (ձեռ. № 1007, էջ 19), «ցաւեր ըստացար» (№ 985, էջ 191), «Ղսկիզբն և կատարումն մեղ եղիցի» ըսկզբունս (№ 1747, էջ 80, 72բ)։ «Պարզաբանութիւն Սաղմոսացն Դաւթի» գրքում հեղինակը բերում է գրաբար բնադիրը, նրա կողքին աշխարհաբարը, և հետաքրքիր է, որ գրաբարյան մասում բառերը ը տառը չունեն, իսկ աշխարհաբարյան մասում՝ ունեն։ Օրինակ՝ սպանանել-ըսպանանել, սքանչելի-ըսքանչելի, շտեմարան-ըշտեմարան, ստեղծաւղ-ըստեղծօղ և այլն։ Ուրեմն գրաբարյան մասը գրիչը գրել է ավանդական ուղղագրությամբ, հարադատ է մնացել սուրբ գրքի գրությանը, իսկ աշխարհաբարյան մասը՝ հնչյունային գրությամբ, հետևելով արտասանությանը։

բ) Բաղաձայնին նախորդող զ նախդրից առաջ: Այսպես, պատահում է №№ 415, 2101, 2865, 8443 ձեռագրերում, Դիվանի 3-րդ պրակի վիժական արձանագրություններում և այլուր՝ ըզբանն, ըզմարմնոյ, ըզդատաստան, ըզսուրբ, ըզմարդն. ըզհաւասարութիւն, ըզտարբերութիւն, ըզպատճառն, ըզմեզ, ըզգիրս, ըզտունն, ըզճանապարհն: Նաև՝ զը մեռեալս, զը կենդանիս (ձեռ. № 1958), զը Յակոբ, զը փարես (ձեռ. № 5547), զը գեստս և այլն:

գ) Բառասկզբի Ռ տառից առաջ՝ ըռուսուգանայ, ըռանկ, ըռնգամբ, ըռշտունոյ, ըռուզբ, ըռոճկաւք, ըռես, ըռզակ, ըռըստակիս (ձեռագիր №№ 415, 2101, 2865, 8443, Դիվ. 3-րդ և այլն):

դ) Բառամիջում շատ է տարածված գաղտնավանկ ը-ի գրությունը, Միայն մեկ ձեռագրում (№ 985) գաղտնավանկ ը-ի գրությամբ 118 բառ կա (փըշընցի, հընազանդ, ճըշմարիտ, փըշեալ, դըմա, պատարագըս, ջուրըս, խունկըք և այլն): № 4035 ձեռագրում գաղտնավանկ ը-ն գրված է 120 բառում: Այդտեղ պատահում են նույնիսկ՝ սըբը, քարամբը, որսը գրությունները, ի. հաշիկյանի հիշատակարանների 1-ին, 2-րդ մասերում գաղտնավանկ ը-ն գրված է 576 բառում, ըստ որում և՛ բառասկզբում և՛ բառամիջում:

Հետաքրքիր է, որ № 415 ձեռագրի գրիչը բայի և եղանակիչի ու շխտական մասնիկի և նրանց հաջորդող բաղաձայնի միջև՝ նշանն է դնում, ի նշան այդ դիրքում ը հնչյունի առկայության: Նա գրում է՝ չ'թողու, կ'կշնու, չ'փոխէ, չ'լիսի, չ'վախէ, չ'մարսէ, չ'նամբեքէ, չ'կշտանայ, չ'գայ, կ'մեռանի, կ'թողու, նույնիսկ՝ չ'եչնէ, չ'եղաւ, չ'ընծայի և այլն: Այս նշանը հետագայում փոխարինվեց ապաթարցով: Գաղտնավանկ ը-ի գրությունը տարածված է նաև ուշ միջնադարի վերը նշված տպագիր գրականության մեջ, Հովհաննես Կոստանդնուպոլսեցու, Գալանոսի քերականություններում, Ռիվոլայի «Բառգրքում», «Սաղմոսարանում», «Պարզատումարում» և այլն:

Նկատելի է, որ գաղտնավանկ ը-ն հանդիպում է հատկապես այն դիրքում, ուր նա հնչյունափոխության հետեանք է: Օրինակ՝ կսկըծալ, ծնընդեան, ահդընդոց, սկըղբնական, թընդմունք, գըրոց և այլն: Գրիչները խուսափում են մեկից ավել ը գրել, օրինակ՝ քնքըշանք, բժըշկեցին, դծընունդս, ծնընդոց, սնընդարար, փրկըշին, սկըղբնական, պտըտան, ձմըռնամուտ և այլն:

Գաղտնավանկ ը-ի գրությունը պատահում է նաև բառավերջին վանկում՝ սիրտըն, գլուխըն, մլքաթղթովըն, կարդըս, ուրեմըն, կողմըն, դեմըն, տողումըն, կարելի է ասել, որ ժամանակակից հայերենի ը հոգն առաջացել է այս գաղտնավանկից, և-ն ընկնելու հետեանքով (մարդըն>մարդը, կողմըն>կողմը, անձըն>անձը, և այլն):

2) Երբ գրիչները, հետեւելով դասական ուղղագրությանը, ժայրահղության ևն հասնում և ը-ն չեն գրում նաև այն դիրքում, ուր պիտի գրվի: Ը-ով սկսվող բառի սկզբում արմատ կամ մասնիկ ավելանալիս որոշ գրիչներ ը-ն չեն գրում՝ համարելով այն, ըստ երևույթին, գաղտնավանկ: Օրինակ՝ «Ե. զնտիրո ընտիրոս», — դրում է № 985 ձեռագրի գրիչը, մտածելով, թե առանց գրելու էլ ը-ն հնչվում է, №№ 1958, 2684, 4035, 1097, 2685, 108, 415 և այլ ձեռագրերում, հիշատակարաններում հանդիպում են՝ զնդունիչսն, զնկեցեալսն, զնկերն, յնկերն, յնդունելութիւն, զնտիր, յմբռնեցելումն, յնտրմանն, յնդունաղն, ի յնթացսն, զնթացակցութիւնսն, զնթերցութեան, զնկալեալն, յնչից, աւստարէ, յնկերութիւն, յմպելեաց և այլն: Այս սխալը ընդհանուր երևույթ չէ և պատահում է մինչև XV դ.:



Հետագա դարերում մեր հիշատակած այս բոլոր շեղումները, սակայն, օրինական չդարձան և հայ դրականությունը մնաց դասական ուղղագրությամբ:

## ПРАВОПИСАНИЕ ГЛАСНЫХ АРМЯНСКОГО ЯЗЫКА В X—XVII вв.

С. В. ГЮЛЬБУДАГЯН

### Резюме

Основой правописания армянского языка в X—XVII вв. была орфография классического грабара. Намеченное в XI в. расхождение между письменной и устной речью привело к разнообразию в орфографии. Грамматики XII—XIII вв. (Аристакес Грич, Георг Скевраци и другие) составили свод правил по орфографии, намереваясь восстановить правописание предков.

На основе изучения рукописей и других письменных источников мы установили орфографические отклонения в письме означенной эпохи. Изучения этих отклонений важны для исследования исторической фонетики армянского языка.